ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ kar.ghazaryan@gmail.com

DOI: 10.24234/scientific.v2i47.162

ԱՄՓՈՓՈՒՄ

Վրաստանի արտաքին քաղաքականությունը և հատկապես տարածաշրջանային քաղաքականությունը հասկանալու համար կարևոր նշանակություն ունեն կառավարության կողմից ընդունված արտաքին քաղաքական հայեցակարգերը և փաստաթղթերը: Վրաստանը և նրա արտաքին քաղաքականությունը ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության առաջնահերթություններից են՝ հաշվի առնելով հայ-վրացական բարձր մակարդակի հարաբերությունները, Վրաստանի տարանցիկ նշանակությունը, Վրաստանում ապրող մեծաթիվ հայ համայնքի առկայությունը, ինչպես նաև երկկողմ հարաբերություններում փոխադարձ շահերն ու հետաքրքրությունները:

Հոդվածում վերլուծում ենք Վրաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգերը և կառավարության կողմից ընդունված փաստաթղթերը, դրանց առաջնահերթությունները և աշխարհաքաղաքական զարգացումներից հետո տեղ գտած փոփոխությունները: Գիտական աշխատանքը շարադրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, իրադարձային և բովանդակային վերլուծությունների համակարգային մեթոդները:

Գիտական աշխատանքի ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ նպատակները.

Ուսումնասիրել Վրաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգերը, կառավարության կողմից ընդունված փաստաթղթերը, աշխարհաքաղաքական զարգացումներից հետո տեղ գտած հայեցակարգային փոփոխությունները, ինչպես նաև հայեցակարգերի և արտաքին քաղաքական որոշ փաստաթղթերի արդիականությունը:

Ձեռքբերումներ.

Վրաստանի արտաքին քաղաքական հայեցակարգերը աշխարհաքաղաքական զարգացումներից հետո ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների, որոնք ամբողջովին չեն արտահայտում այն իրականությունը, որն առկա է Վրաստանի որդեգրած արտաքին քաղաքականության մեջ:

Բանալի բառեր՝ *Վրաստան*, Ռուսաստան, Արևմուտք, արտաքին քաղաքականություն, հայեցակարգ, Հարավային Կովկաս, երկկողմ հարաբերություններ, բազմակողմ դիվանագիտություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների և սկզբունքների մասին պատկերացումների համար կարևոր նշանակություն ունեն հատկապես արտաքին քաղաքական հայեցակարգերը, որոնք կառավարության կողմից ընունվում են չորս տարվա համար: Այս փաստաթուղթը կարծես լրացնում է ազգային անվտանգության ռազմավարությանը, որտեղ էլ ավելի խորքային անդրադարձ է կատարվում արտաքին քաղաքականության առաջնահերթություններին: Դեռևս 1996 թվականին Վրաստանի նախկին նախագահ Է. Շևարդնաձեն նախաձեռնել էլ ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության փաստաթղթեր ունենալու գործընթաց և ազգային անվտանգության հայեցակարգի առաջին տարբերակն արդեն ընդունվեց 1997 թվականին: Սակայն պետք է նշենք, որ Վրաստանն իր ռազմավարական և հատկապես արտաքին քաղաքական հայեցակարգային մոտեցումներին սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել 2000-ականներից, երբ իշխանության եկավ Մ. Սահակաշվիլու թիմը: ԱՄՆ պաշտոնյաների և փորձագետների անմիջական աջակցությամբ նրանք դեռևս 2004 թվականից սկսեցին կազմավորել այնպիսի մարմիններ, որոնք պետք է զբաղվեին այդ փաստաթղթերով: Եվ ամենևեին էլ պատահական չէ, որ Վրաստանի 2005 թվականի Ազգային անվտանգության հայեցակարգին հաջորդեց առաջին արտաքին քաղաքական հայեցակարգի ընդունումը: Այդ փաստաթղթերում կարևոր նշանակություն էր տրվում նաև Արևմտյան երկրների և կառույցների հարաբերություններին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վրաստանի՝ 2006-2009 թթ արտաքին քաղաքական հայեցակարգի վերլուծություն:

Դեռևս 2006 թվականին Վրաստանի արտաքին քաղաքական հայեցակարգում կարևորվում էր արտաքին քաղաքական արևմտյան վեկտորը, որը հետագայում փաստաղթային ձևակերպումներ ստացավ նաև ազգային անվտանգության ռազմավարության մեջ:

Բովանդակային սկիզբը սկսվում է հետևյալ ձևակերպումներով: «Վարդերի հեղափոխությունից հետո Վրաստանը ձեռնամուխ եղավ բարեփոխումների համապարփակ գործընթացի՝ ուղղված ժողովրդավարական կառավարման և օրենքի գերակայության հաստատմանը՝ ապահովելու կայուն տնտեսական աճ և տարածքային ամբողջականության խաղաղ վերականգնում:

Վրաստանը, վերածվելով ուժեղ ինստիտուտներով եվրոպական պետության, լիովին ինտեգրվում է Եվրոպական և Եվրատլանտյան կառույցներին» (Foreign Policy Strategy, 2006-2009):

Այսինքն, հստակ ընգծվում է արտաքին քաղաքականության Արևմտյան վեկտորի կարևորությունը: Ռազմավարական նպատակներ բաժնում ասվում է.

«Ունենալ անկախ, ապահով և կայուն երկիր: Արտաքին ծառայության նպատակն է աջակցել վրացիների ջանքերին: Կառավարությանն ուղղված պետական անկախության ամրապնդմանը և կայուն ու ապահով երկիր դառնալու գործընթացին» (Kakachia & Georgian, 2013): Այս նպատակին հասնելու համար մեր դիվանագիտությունը կենտրոնանալու է Վրաստանի ներքին/սառեցված հակամարտությունների խաղաղ կարգավորման և տարածքային ամբողջականության ամրապնդման, ինչպես նաև բարենպաստ միջազգային միջավայրի ձևավորման և ազգային շահերի վրա: Սա ազատ ու ինքնիշխան լինելու հիմնական նախապայմաններից մեկն է ազգի, ինչպես նաև մեր քաղաքացիների կյանքի և անվտանգության ապահովման համար»:

«Տարածքային ամբողջականություն» բաժնում խոսվում է խաղաղությանն ուղղված գործողությունների մասին: Մասնավորապես ասվում է.

«• Իրականացնել խաղաղության ծրագիրը Հարավային Օսիայի/Ցխինվալի տարածաշրջանի համար: Արտաքին ծառայությունը կապահովի միջազգային հանրության ակտիվ մասնակցությունը խաղաղության ծրագրի իրականացման գործին: Այս աշխատանքը կշարունակվի բազմակողմ (ԵԱՀԿ, Եվրամիություն), ինչպես նաև երկկողմ մակարդակներով, առաջին հերթին Միացյալ Նահանգների և Ռուսաստանի Դաշնության հետ:

• Աբխազիայի համար մշակել համատեղ խաղաղության ծրագիր և սկսել դրա իրականացումը: Աբխազիայում համապարփակ խաղաղության հասնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել տարածքային ամբողջականության վերականգնմանը միտված ծրագիր: Միջազգային աջակցություն ներգրավելու նպատակով դիվանագիտական ծառայությունը կշարունակի աշխատել այն միջազգային կազմակերպությունների և գործընկեր երկրների հետ, որոնք նպաստում են բանակցություններին, Աբխազիայի խաղաղության ծրագրի մշակմանը և խաղաղ գործընթացին» (Foreign Policy Strategy, 2006-2009):

«Ազգային անվտանգության ուժեղացում» գլխում խոսվում է անվտանգության համակարգը եվրոատլանտյան ուղղությամբ զարգացնելու մասին («Բարձրացնել պաշտպանական կարողությունները՝ հիմնվելով Եվրատլանտյան անվտանգության պարադիգմայի վրա»):

Պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ բարեփոխում՝ ուղղված պաշտպանության համակարգի ստեղծմանը, որը համատեղելի է եվրոպական և եվրատլանտյան անվտանգության չափանիշներին: Դիվանագիտական ծառայության նպատակն է աջակցել պաշտպանական բարեփոխումների հաջող իրականացմանը՝ ներգրավելով բարեկամ

պետություններին՝ Վրաստանի հետ փորձի փոխանակում իրականացնելու համար: Այսինքն, անվտանգության հարցում դեռևս 2000-ականներից հստակ պարզ էր, որ ՌԴ դերակատարությունը Վրաստանի անվտանգության հարցում նվազել է՝ հասնելով անգամ շատ ցածր մակարդակի: Չնայած այն հանգամանքին, որ դեռևս 90-ականներից ՌԴ դերակատարությունը Վրաստանում բավականին մեծ էր, ինչը պայմանավորված էր նաև անվտանգության հարցում խորը համագործակցությամբ, այնուամենայնիվ 2000-ականներից այդ ամենը հետզհետե նվազում էր: Արդեն պարզ էր, որ վրացական կողմն իր համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում գնալով նվազեցնում է ռուսական դերը, որին փոխարինելու է գալիս արևմտյան համագործակցությունը, ինչպես անվտանգային, այնպես էլ տնտեսական և այլ ոլորտներում:

«Տարածաշրջանային կայունություն» գլխում անդրադարձ է կատարվում հետևյալ խնդիրներին.

«Տարածաշրջանային սպառնալիքներից նվազագույնի հասցնել Վրաստանի ազգային շահերին հասցված վնասը՝ տարածաշրջանում խաղաղությունը, կայունությունը և համագործակցությունը խթանելու համար:

• *Տարածաշրջանային սպառնալիքների հակազդեցություն:* Հակամարտության մեջ միջազգային մասնակցության ուժեղացումը, սևծովյան տարածաշրջանում խնդիրների լուծումը և նոր սպառնալիքներից խուսափելն ունեն կարևոր նշանակություն: Սա նկատի ունենալով՝ մենք ակտիվորեն կհամագործակցենք շահագրգիռ կողմերի հետ՝ հակամարտությունները մեր տարածքում լուծելու համար, ինչպես Կովկասում, այնպես էլ սևծովյան տարածաշրջանում: Հայաստանն ու Ադրբեջանը նախապայման են տարածաշրջանային համագործակցությունը խթանելու և փոխշահավետ եռակողմ տարածաշրջանային նախագծեր մշակելու համար: Ուստի, Վրաստանը շարունակելու է կապող կամրջի դերը՝ այս երկու երկրների միջև կառուցողական երկխոսությունը հեշտացնելու համար: Այսինքն, տարածաշրջանային կայունության հասնելու գործում Վրաստանն իրեն տեսնում է որպես միջնորդ և «կամուրջ» հատկապես հայ-ադրբեջանական հակամարության խաղաղ կարգավորման գործընթացում: Վերոնշյալի մասին ամենաբարձր մակարդակով արվել են նաև բազմաթիվ հայտարարություններ: Այս բաժնում խոսվում է նաև տարածաշրջանային համագործակցության գործող մեխանիզմների մասին:

Տարածաշրջանային համագործակցության շրջանակներում կզարգանան Ժողովրդավարական ընտրության համայնքի (CDC), Ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպության (ՎՈՒԱՄ) և ՍԾՏՀ-ի հետ հարաբերությունները:

•Ամրապնդել Սև ծովի տարածաշրջանային հարթությունը: Վրաստանի դիվանագիտական ծառայությունն աշխատելու է գործընկերների և միջազգային կառույցների հետ՝ ամրապնդելու Եվրոպական և Եվրատլանտյան կառույցների սևծովյան համագործակցությունը: Սա ընգծելը

հատկապես կարևոր է Վրաստանի տարածաշրջանային քաղաքականությունը և արտաքին առաջնահերթությունները հասկանալու տեսանկյունից» (Foreign Policy Strategy, 2006-2009):

«Եվրոպական և Եվրատլանտյան ինտեգրում» բաժնում խոսվում է ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին միանալու անհրաժեշտության մասին (Foreign Policy Strategy, 2006-2009):

«•Խորանալով հաստատել Վրաստանի տեղը ընդհանուր եվրոպական ընտանիքում,

•Ինտեգրվել ԵՄ-ին և անդամակցել ՆԱՏՕ-ին,

• Պահպանել Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցելուն ուղղված ինտեգրման դինամիկան: Դիվանագիտական ծառայության ընթացիկ աշխատանքը շարունակական աջակցությունն է ՆԱՏՕ-ին անդամակցելու մեր հայտարարած նպատակին»:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի հետ հարաբերությունների հատվածին, ապա այստեղ ասվում է, որ ԵՄ-ն Վրաստանում և Հարավային Կովկասում մեծ կարևորություն ունի. «Այդ նպատակով մենք կակտիվացնենք հարաբերությունները Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի հետ Եվրամիության, ինչպես նաև Բարձր ներկայացուցչի գրասենյակի հետ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն համատեքստում:

ԵՄ-ի հետ աստիճանական ինտեգրումը երկարաժամկետ արտաքին քաղաքականություն է և Վրաստանի ռազմավարական նպատակն է» (Sportel & Tchkoidze, 2011):

«• Վրաստանի համար կարևոր է ընդունել և իրականացնել Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագիրը (ԵՀՔԱՊ)»:

Կարևորվում է ԵՄ հարևանության քաղաքականությունը և ինտեգրացիայի խորացումը ԵՄ-ի և անդամ երկրների հետ: ԵՄ-ի և եվրոպական կառույցների մասին խոսվում է նաև մյուս բաժիններում՝ ընգծելով եվրոպական կառույցների դերը Վրաստանի արտաքին քաղաքական գործընթացներում և ներքին բարեփոխումների ընթացակարգերում: Նշվում է նաև, որ Վրաստանը կարևորում է նաև տարածաշրջանային համագործակցությունը ՍԾՏՀ ՎՈՒԱՄ, ԱՊՀ և այլ կազակերպությունների հետ: Այժմ համառոտ ներկայացնենք երկկողմ հարաբերությունների բաժինը, որը ավելի լավ պատկերացում կտա Վրաստանի արտաքին քաղաքական դերակատարների և դրանում Վրաստանի հայեցակարգային մոտեցումների մասին:

Երկկողմ հարաբերություններ:

Թուրքիա:

«Թուրքիան Վրաստանի առաջատար տարածաշրջանային գործընկերն է, որն աջակցում է մեր երկրի կայացմանը դեպի կայուն և ուժեղ երկիր: Վրաստանն ու Թուրքիան ռազմավարական գործընկերներ են մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, տնտեսությունը, էներգետիկան, պաշտպանությունը և անվտանգությունը: Թուրքիան մեծ նշանակություն ունի Վրաստանի տարածքային ամբողջականությանն աջակցության հարցում,

ինչպես նաև աջակցում է Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման և Վրաստանի զարգացման գործընթացներին:

Վրաստանի զինված ուժերում գործընկերությունը կխորանա, կզարգանան հարաբերությունները նաև էներգետիկայի, առևտրի, ինչպես նաև առաջիկա տարիներին զբոսաշրջության ոլորտներում» (Sportel & Tchkoidze, 2011):

Ռուսաստանի Դաշնություն:

«Ռուսաստանի Դաշնության հետ բարիդրացիական և իրավահավասար հարաբերությունների հաստատումը Վրաստանի արտաքին քաղաքականության հիմնարար առաջնահերթություններից է: Ելնելով սրանից՝ Վրաստանը սկզբունքորեն պատրաստ է զարգացնել փոխշահավետ համագործակցությունը առևտրի և տնտեսության ոլորտներում, ներգրավել ռուսական ներդրումներ և երկխոսություն վարել անվտանգության հարցերում»:

Մարտի 31-ին ստորագրված պայմանագրերի փաթեթից դուրս գալու մասին.

«Վրաստանի տարածքից ռուսական ռազմակայանների տեղաշարժը դրական է երկու երկրների հարաբերությունների համար: Վրաստանի ղեկավարությունը ժամանակին կապահովի սույն համաձայնագրի պատշաճ կատարումը, ինչպես նաև ստանձնած պարտավորությունները: Վրաստանը ձգտում է զարգացնել համագործակցությունը Ռուսաստանի հետ սահմանների պաշտպանության ոլորտում: Ռուս-վրացական պետական սահմանի արդյունավետ վերահսկողության իրականացումը կնպաստի մաքսանենգության, կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարին: Մենք լիովին գիտակցում ենք Ռուսաստանի կարևոր դերը Վրաստանի տարածքում խաղաղ ճանապարհով հակամարտությունների կարգավորման հարցում: Ըստ այդմ՝ ապահովելու ենք դրական միջավայր Ռուսաստանի մասնակցության համար հակամարտությունների խաղաղ կարգավորման և վերականգնման գործում:

Վրաստանի տարածքային ամբողջականությունը մեր արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկն է» (Kakachia & Georgian,2013):

Հայաստան-Ադրբեջան:

«Վրաստանն ունի պատմականորեն հաստատված բարիդրացիական կապեր և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի հետ: Գործընկերության ակտիվացումը Հարավային Կովկասում երեք պետությունների միջև հսկայական նշանակություն ունի երկրի հետագա զարգացման համար: Վրաստանը կխորացնի իր ռազմավարական գործընկերությունը Ադրբեջանի հետ՝ հասնելու համար էներգետիկ անվտանգության՝ լիովին օգտագործելով Հարավային Կովկասի տրանսպորտային միջանցքի ներուժը և իրականացումը նոր մեծածավալ տարածաշրջանային ծրագրերի համար» (Sportel & Tchkoidze, 2011): «Վրաստանը կշարունակի սերտ համագործակցությունը Հայաստանի հետ երկկողմ շահերի լայն շրջանակի շուրջ: Վրաստանն

աջակցում է Հայաստանի ավելի լայն մասնակցությանը տարածաշրջանային ծրագրերում և ողջունում է Եվրոպական և Եվրատլանտյան կառույցների հետ Հայաստանի գործընկերության ակտիվացումը, ինչը պետք է դրական ազդեցություն ունենա տարածաշրջանի անվտանգության վրա»:

Այսինքն սրանից կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի հետ Վրաստանի հարաբերությունները նշվում են որպես ռազմավարական, իսկ Հայաստանի հետ սերտ համագործակցություն, որով կարծես ավելի բարձր նշանակություն է տրվում Ադրբեջանի հետ հարաբերություններին:

«Երկկողմ հարարբերություններ» բաժնում խոսելով եվրոպական երկրների հետ հարաբերությունների կարևորությունից՝ նշվում է հատկապես Գերմանիայի մասին, որը կարող է դառնալ Վրաստանի ռազմավարական գործընկերը: Ընգծվում է նաև Ֆրանսիայի աջակցության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի, Հունաստանի, Լեհաստանի, Նիդեռլանդների, Մերձբալթյան երկրների հետ հարաբերությունների զարգացման կարևորությունը: Նշվում է նաև սևծովյան ավազանում Ռումինիայի և Բուլղարիայի հետ համագործակցության, ինչպես նաև Ուկրաինայի հետ ռազմավարական հարաբերությունների խորացման կարևորության մասին: Գլոբալ հարաբերությունների բաժնում նշվում են ԱՄՆ-ի, Կենտրոնասիական երկրների, Մերձավոր Արևելքի երկրների, Չինաստանի, Ճապոնիայի և Կորեայի հետ հարաբերությունների զարգացման մասին:

Կարելի է եզրակացնել, որ չնայած Վրաստանի համար առաջնային նշանակություն ունի տարածաշրջանային քաղաքականությունը, այնուամենայնիվ, մեծ նշանակություն է տրվում նաև արտատարածաշրջանային հարաբերություններին, որոնց մեջ առանձնահատուկ կարևորություն ունի հատկապես Արևմտյան ուղղությունը: Վրաստանն իր արտաքին քաղաքականության մեջ մշտապես փորձում էր բալանսավորման քաղաքականություն վարել, ինչը երբեմն այնքան մեծ խնդիրներ հարուցեց Վրաստանի համար՝ երկիրը տանելով դեպի պատերազմի և տարածքային կորուստների:

Վրաստանի 2019-2022 թթ արտաքին քաղաքան հայեցակարգի վերլուծություն:

Վրաստանի արտաքին քաղաքականության համար կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերի շարքը 2019 թվականի ապրիլի 2-ին համալրվեց ևս մեկով, երբ Վրաստանի կառավարությունը ընդունեց Վրաստանի արտաքին քաղաքականության 2019-2022թթ հայեցակարգը: Առաջիկա քառամյա ժամանակահատվածի հիմնական առաջնահերթությունները հետևյալներն են.

«- Անվտանգություն և տարածքային ամբողջականություն,

-Եվրամիություն և ՆԱՏՕ ինտեգրում,

-Կայուն տնտեսական զարգացում,

-Երկկողմ և բազմակողմ համագործակցության ամրապնդում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային մակարդակով,

-Նպաստում համաշխարհային անվտանգությանը:

Վրաստանի անվտանգության հիմնական մարտահրավերը մնում է Աբխազիայի և Հարավային Օսիայի ռուսական օկուպացիան: Ըստ այդմ՝ փաստաթղթում ասվում է, որ «թեժ միջավայրում» սեփական շահերի պաշտպանությունը մնում է ամենաբարձր առաջնահերթությունը: Վրաստանն իրեն տեսնում է որպես «եվրոպական ժողովրդավարական երկիր», որը հավատարիմ է խաղաղությանը, օրենքի գերակայությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում» (Tskitishvili, 2022) :

Այս կապակցությամբ ռուսական ՏԱՍՍ լրատվական գործակալությունը հիշեցրել է, որ «Վրաստանը ՆԱՏՕ-ի հետ աշխատում է 90-ականների վերջից: 2002 թվականի նոյեմբերին այն ժամանակվա նախագահ Էդուարդ Շևարդնաձեն Պրահայի գագաթնաժողովում հայտարարեց, որ երկիրը ցանկանում է դառնալ Դաշինքի անդամ: Այս ջանքերը հաստատեց հաջորդ նախագահ Միխայիլ Սահակաշվիլին: 2012 թվականի հոկտեմբերին «Վրացական երազանք» կոալիցիայի հաղթանակից հետո իշխանության եկած նոր կառավարությունը շարունակեց ՆԱՏՕ-ին ինտեգրվելու իր ուղին: Միաժամանակ նոր իշխանությունները «Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների աստիճանական կարգավորումն» անվանեցին Վրաստանի արտաքին քաղաքականության «գլխավոր խնդիր»: Այնուամենայնիվ, դա չի կարող տեղի ունենալ ի վնաս Վրաստանի տարածքային ամբողջականության»: 2015-ին և 2016-ին և 2019-ի մարտի 25-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգն այցելեց Թբիլիսի: Նա հաստատեց, որ Վրաստանը կդառնա ՆԱՏՕ-ի անդամ, չնայած Ռուսաստանի դիրքորոշմանը, սակայն, նշել է, որ չի կարող հստակ ժամկետ նշել Դաշինքին երկրի անդամակցության համար (Caucasus Watch, 2019): Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, ռուսական օկուպացիան և դրան ուղեկցող սպառնալիքները փաստաթղթի ուշադրության կենտրոնում են, հետևաբար առաջնահերթ նպատակները սերտորեն կապված են այդ սպառնալիքների հետ և ներառում են միջոցառումներ՝ ապահովելու չճանաչման քաղաքականությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և հումանիտար իրավիճակ գրավյալ տարածքներում, հարկադիր վերաբնակների վերադարձ, երկխոսության ձևաչափի պահպանում և այլն Ռուսաստանի հետ, հակամարտությունների հնարավոր սրման կանխարգելում և խաղաղ կարգավորման հանձնառություն, այդ հակամարտությունների լուծում: Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրումը կազմում է փաստաթղթի հիմնաքարը, որն ընդգրկում է ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ համագործակցության բոլոր ձևաչափերը: Սակայն ռազմավարությունը շրջանցում է այն բուռն խնդիրները, որոնք խոչընդոտել են Վրաստանի անդամակցությանը այդ

կազմակերպություններին: Թե՛ ԵՄ-ին, թե՛ ՆԱՏՕ-ին վերաբերող հարցերը բավականին կոնկրետ են: Ինչ վերաբերում է ԵՄ-ին, ապա ռազմավարությունը վերաբերում է ասոցացման համաձայնագրի և ԽՀԱԱՀ-ի իրականացմանը ռազմավարական գործընկերության ոլորտում:

Անվտանգությունը, միգրացիան և շարժունակությունը և հարակից մարտահրավերները ճանապարհային քարտեզ են Վրաստանի անդամակցության համար, որը միակողմանիորեն մշակվել է ԵՄ կողմից: ԵՄ-ի հետ հարաբերություններում կարևոր նշանակություն ունի նաև Արևելյան գործընկերության ձևաչափը: Այնուամենայնիվ, ռազմավարությունը նույնպես խոսում է աճող պոպուլիզմի և ԵՄ ներսում տարածվող եվրասկեպտիցիզմի մասին՝ կարևոր գործոն համարելով եվրաինտեգրման օրակարգին Վրաստանի հետամուտ լինելը» (Mikeladze, 2022): Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա հայեցակարգն ամփոփում է ՆԱՏՕ-ի և Վրաստանի կողմից ձեռնարկված աշխատանքները Հանձնաժողով և քաղաքական երկխոսության ակտիվացում ստեղծելու շուրջ: Տարեկան ազգային ծրագրի կիրառումը, որն ուղղված է Վրաստանի անդամակցությանն աջակցելու գործընթացին, էական փաթեթ է ոչ միայն Վրաստան-ՆԱՏՕ հարաբերություններում, այլ նաև արտաքին հաղորդակցություն համար:

Նշվում է, որ «Վրաստանը մեծ դեր է խաղում է Սև ծովի անվտանգության ապահովման գործընթացներում, կարևորվում է Վրաստանի մասնակցությունը միջազգային առաքելություններին և ՆԱՏՕ-ի հովանու ներքո անցկացվող դասընթացներին: Բացի այդ, Փաստաթղթում ընդգծվում է ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ ավելի խորը համագործակցության կարևորությունը՝ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության շուրջ կոնսենսուս ձեռք բերելու համար» (ibid):

ԱՄՆ-ի հետ գործընկերությունը նշվում է որպես ռազմավարական գործընկերություն և ասվում է, որ համագործակցության ոլորտները բավականին կառուցվածքային են: Այն չի սահմանափակվում միայն պաշտպանությամբ և անվտանգությամբ, այլ ներառում է աջակցություն Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրմանը, ամրապնդում է Վրաստանի ժողովրդավարական բարեփոխումները, ժողովրդավարական ինստիտուտները և առևտրատնտեսական համագործակցությունը:

Փաստաթուղթը ընդհանուր ակնարկ է ներկայացնում Գերմանիայի և Ֆրանսիայի հետ Վրաստանի համագործակցության առումով և կենտրոնանում է հիմնականում այս երկրների կողմից Վրաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության աջակցության կարևորության վրա: Այն ընդգծում է ավելի խորը տնտեսական և առևտրային հարաբերությունների կարևորությունը և ներդրումների ներգրավումը Գերմանիայից և Ֆրանսիայից:

Ռազմավարությունն ընդգծում է միջազգային անվտանգության համակարգում Վրաստանի ներդրման կարևորությունը, ներառյալ նրա մասնակցությունը ՆԱՏՕ-ի հովանու ներքո

իրականացվող միջազգային առաքելություններին: Կարելի է ընգծել, որ Վրաստանը շարունակում է առաջնահերթությունների շարքում պահել եվրոպական կառույցներին՝ ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցության նպատակը և կարևորում է տարածքային ամբողջականության վերականգնումը, ինչպես նաև ՌԴ-ի հետ երկխոսությունը ինքնիշխանության և իրավահավասարության սկզբունքի հիման վրա:

Արտաքին քաղաքական այլ փաստաթղթեր, որոնք ընդունվել են Վրաստանի կառավարության կողմից:

Համառոտ անդրադառնանք նաև «Կառավարության 2020-2024 թթ. ուղղված Եվրոպական պետություն կառուցելու» ծրագրին:

2020 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանի խորհրդարանը հաստատել է կառավարության նոր կազմը. նախարարների և կառավարության նոր ծրագիրը, որը սահմանում է իշխող կուսակցության տեսլականը:

Համաձայն ծրագրի՝ եվրոպական պետության կառուցումն այդ ժամանակաշրջանի առաջնահերթություններից է 2021-ից 2024 թվականներին: «Եվրոպական պետությունը» փաստաթղթի հիմնական հենասյունն է, որը պտտվում է դրա շուրջ տարբեր ուղղություններով, ներառյալ արտաքին քաղաքականությունը և անվտանգությունը:

Փաստաթղթի կառավարության տեսլականին վերաբերող հատվածում ընդգծվում է Վրաստանի եվրոպական ձգտումը, որը հիմք է տալիս արտաքին քաղաքականության և անվտանգության քննարկման համար, ինչպես նաև մարդու իրավունքների ինստիտուտներն ամրապնդելու համար: Կարևոր հիմնաքարը, որը ամրագրված է ծրագրում, Վրաստանի մտադրությունն է պաշտոնապես դիմել ԵՄ-ին անդամակցելու համար մինչև 2024 թվականը (ինչն իրականում կատարվել է 2022 թվականի մարտին): ԵՄ-ի հետ համագործակցության խորացումն առևտրի, տնտեսության, տրանսպորտի և էներգետիկ անվտանգության ոլորտներում կարևոր նախապայման է ԵՄ ինտեգրացիայի համար:

Փաստաթղթի համաձայն՝ կառավարությունը պարտավորվել է արդյունավետորեն իրականացնել ԵՄ անդամակցության ճանապարհային քարտեզը՝ Ասոցացման համաձայնագրի և ԽՀԱԱՀ-ի շրջանակներում ապահովելու համար երկրի ինտեգրումը եվրոպական ընդհանուր շուկային: Խորացված համագործակցությունը ԵՄ-ի հետ առևտրի, էներգետիկայի, կապի և այլնի ոլորտներում, Վրաստանի տարանցիկ դերի ուժեղացումը բխում են Վրաստանի ազգային շահերից:

Կառավարության ծրագրում ուշադրություն են դարձվում այնպիսի խնդիրների, ինչպիսիք են դեօկուպացումը և վրաց-ռուսական հակամարտության խաղաղ լուծումը: Նշվում է, որ Ռուսաստանի հետ երկխոսության պահպանումը, մարդու իրավունքների պաշտպանության արձագանքը օկուպացված տարածքներում, ընդհանուր հումանիտար իրավիճակին և հարկադիր

վերաբնակների վերադարձի հետ կապված հարցերն ունեն առաջնային նշանակություն Վրաստանի համար:

Ծրագիրը կենտրոնանում է նաև ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հեռանկարների վրա, որը ներառում է սևծովյան անվտանգության զարգացումը և այն առանձնահատուկ դերը, որ Վրաստանը խաղում է որպես կարևոր և հուսալի գործընկեր երկիր այս գործընթացներում: Կառավարությունը նախատեսում է մշակել Սև ծովի ազգային ռազմավարություն: Ծրագրի համաձայն՝ կառավարությունը նախատեսում է այդ շրջանակներում խորացնել համագործակցությունն ԱՄՆ-ի հետ ռազմավարական խարտիայի՝ անվտանգության, պաշտպանական կարողությունների զարգացման, դեօկուպացիայի, չճանաչման քաղաքականության և առևտրի և տնտեսության ուղղություններով: Կառավարությունը նախատեսում է նաև ինտենսիվացնել աշխատանքները ԱՄՆ-ի հետ և ազատ առևտրի համաձայնագիր կնքել: Կառավարությունն ընդունում է այն առանձնահատուկ դերը, որն ԱՄՆ-ը խաղացել է Վրաստանի դեմոկրատական ինստիտուտների ամրապնդման գործընթացում, իսկ դա անգնահատելի աջակցություն է Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրմանը:

Այսինքն, այս փաստաթղթում ևս առաջնահերթ նշանակություն է տրվում Վրաստանի եվրոատլանտյան ինտեգրացիային ԵՄ և ՆԱՏՕ անդամ դառնալու կարևոր նպատակներով՝ չբացառելով ՌԴ-ի հետ հարաբերությունների զարգացումը մի քանի ուղղություններով, որոնց մեջ առանձնահատուկ նշանակություն ունի տնտեսական ուղղությունը, ինչպես նաև Աբխազիայի և Օսիայի հետ կապված հումանիտար հարցերում երկխոսությունը, որտեղ մեծ առաջընթաց չկա: Վրացական կողմը հերթական անգամ ընգծում է իր տարածքային ամբողջականության վերականգնման կարևորությունը որպես կարմիր գիծ՝ ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման համար: Վրաստանը շարունակում է իր ներքին բարեփոխումների մեջ առաջնային նշանակություն տալ արևմտյան կառույցներին, ինչպես նաև կարևորում է տարածաշրջանային երկրների հետ հարաբերությունների խորացումը և համագործակցությունը Հարավային Կովկասի անվտանգության և բարեկեցության համար:

Հատկանշական և կարևոր նշանակություն ունի նաև արտաքին գործերի նախարարության 10-ամյա գործողությունների ծրագիրը: «Արևմտյան արժեքների և երկրի շահերի վրա կենտրոնացած արտաքին քաղաքականություն» կոչվող այս փաստաթուղթը էլ ավելի համոզիչ է դարձնում վրացական կողմի՝ Արևմտյան կառույցների անդամ դառնալու ձգտումը:

2021 թվականի օգոստոսի 9-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը ներկայացրել է 10-ամյա գործողությունների՝ «Արևմտյան արժեքների և երկրի շահերի վրա կենտրոնացած արտաքին քաղաքականություն. 10-ամյա տեսլական, 10 նպատակ» ծրագիրը:

«Ծրագիրը հիմնված է երկրի ռազմավարական նպատակների և խնդիրների վրա և սահմանում է հետագա գործունեության 10 հիմնական ուղղությունները.

• Էական առաջընթացի հասնել երկրի ինքնիշխանության ամրապնդման և տարածքային ամբողջականության վերականգնման գործում,

• 2024 թվականին ԵՄ անդամակցության հայտ ներկայացնել և մինչև 2030 թվականը ստանալ թեկնածուի կարգավիճակ,

• Դաշինքի անդամների հետ միասին մշակել ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության ծրագիր և անդամակցության հասնել մինչև 2030 թվականը,

• Ամրապնդել գործընկեր երկրների հետ առկա երկկողմ ռազմավարական հարաբերությունների ձևաչափը, այդ թվում՝ ԵՄ անդամ երկրների, Մեծ Բրիտանիայի, Եվրամիության, Ուկրաինայի և Սև ծովի երկրների, ինչպես նաև տարածաշրջանի երկրների հետ,

• Ստեղծել համապարփակ ռազմաքաղաքական և առևտրատնտեսական դաշինք ԱՄՆ-ի հետ՝ հիմնված երկու երկրների միջև առկա ամուր ռազմավարական գործընկերության վրա,

• Պահպանել հավասարակշռված և փոխշահավետ գործընկերությունը տարածաշրջանի պետությունների հետ,

• Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորում և դեօկուպացման իրական գործընթացի սկիզբ և հակամարտության կարգավորում՝ հիմնված Վրաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության սկզբունքների վրա,

• Սկսել ԵՄ-Վրաստան երկխոսություն կապի և Վրաստանի առաջատար դերի ամրապնդման վերաբերյալ,

Դառնալ Արևելքն ու Արևմուտքը կապող տարածաշրջան,

• Ակտիվ տնտեսական դիվանագիտության միջոցով իրականացնել տարածաշրջանային տնտեսական լայնածավալ նախագծեր, ներգրավել ներդրումային ծրագրեր, խթանել վրացական արտադրանքի արտահանումը և այլն,

• Հզորացնել սփյուռքի կազմակերպությունները և զարգացնել մշակութային-կրթական կենտրոնները» (MFA Georgia, 2021)։

Գործողությունների 10-ամյա ծրագիրը հիմնված է գոյություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի վրա, սակայն սահմանում է լրացուցիչ միջնաժամկետ նպատակները և չափորոշիչները որոշակի ոլորտներում, որոնք կարևոր փոփոխականներ են արտաքին քաղաքականության զարգացման և հաղորդակցման ռազմավարության համար:

Ինչ վերաբերում է ԵՄ-ին Վրաստանի անդամակցությանը, որը երկրի արտաքին քաղաքականության առանցքային խնդիրներից մեկն է, ծրագիրը սահմանում է լրացուցիչ չափորոշիչներ: Մեկը ԵՄ անդամակցության դիմումի ներկայացումն է մինչև 2024 թվականը, իսկ մյուսը՝ թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելը մինչև 2030 թվականը: Ծրագիրը հատուկ ուշադրություն է դարձնում ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցության ամրապնդմանը և որպես կարևոր նպատակ դնում է ներդրումների իրականացումը ԵՄ-ի կողմից առաջարկված

ծրագրի միջոցով, որը վերնագրված է «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ»: Այս նախագիծը նախատեսում է 3,9 մլրդ եվրոյի ներդրումների համախմբում խոշորածավալ տնտեսական նախագծերի իրականացման համար (ibid):

Զեռքբերումներ

Վրաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգերը հստակ ընգծում են, այն հանգամանքը, որ Վրաստանը 2000-ականներից սկսած որպես արտաքին քաղաքականության առաջնահերթություն սահմանել էր Արևմտյան կառույցներին ինտեգրումը ընդհուպ մինչև անդամակցություն: Եթե 2006 թվականին ընդունված փաստաթղթում բավականին մեծ կարևորություն էր տրվում նաև ռուսական գծին, ապա դրանից հետո ընդունված փաստաթղթերում Ռուսաստանը և նրա հետ հարաբերությունների խորացումը համարվում էր վտանգավոր և ազգային անվտանգության սպառնալիք: Արտաքին քաղաքականության փաստաթղթերում հստակ ընգծվում է նաև, որ վրացական կողմը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում և կարևորում է հարաբերությունները տարածաշջանային պետությունների և հատկապես հարևանների հետ: Դեռևս 2000 ականներից սկսած Թուրքիան և Ադրբեջանը դարձել են Վրաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն գործընկերները, որոնց հետ հարաբերությունները նշվում են ռազմավարական: Թուրքիան ավելի մեծ ազդեցություն ունի նաև որպես ՆԱՏՕ անդամ երկիր և Վրաստանում օր օրի ավելանում է թուրքական ներկայությունը բոլոր ոլորտներում: Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա այս եռակողմ ձևաչափը Վրաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական ձևաչափն է, որը հետզհետե ներառում է նոր ոլորտներ՝ մեծացնելով ձևաչափի արդյունավետությունը: Այս հանգամանքը լուրջ սպառանալիքներ կարող է ստեղծել ՀՀ ազգային անվտանգության համար՝ հաշվի առնելով Վրաստանի տարանցիկ նշանակությունը և ՀՀ-ի հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Հայաստանի հետ հարաբերությունները 2006 թվականի հայեցակարգում նշվում են որպես սերտ համագործակցություն: Այսինքն մեզ համար ռազմավարական նշանակություն ունեցող Վրաստանը ռազմավարական նշանակության հարաբերություններ ունի մեր ազգային անվտանգության հիմնական սպառնաիք համարվող երկու պետությունների հետ: Ռուսաստանի դերը 2006 թվականի փաստաթղթում նույնպես համարվում է կարևոր, սակայն ռուսական գիծը և վերջինիս հետ հարաբերությունների խորացումը չի համարվում որպես ռազմավարական նպատակ, իսկ 2008 թվականից հետո ընդունված փաստաթղթերում նշվում է որպես ազգային անվտանգության գլխավոր սպառանալիք: Չնայած նրան, որ ռազմավարական նշանակության փաստաթղթերում ՌԴ-ն համարվում է Վրաստանի ազգային անվտանգության գլխավոր սպառնալիքը, իրականության մեջ այլ պատկեր է և ՌԴ-ն այլ կարգավիճակ ունի: 2022 թվականին ՌԴ-ն դարձավ Վրաստանի երկրորդ առևտրային-տնտեսական գործընկերը՝ զիջելով միայն Թուրքիային: Հետզհետե մեծանում է ՌԴ ազդեցությունը վրացական կյանքում և երկկողմ

տնտեսական հարաբերությունների զարգացումը կարող է պարարտ հող նախապատրաստել նաև այլ ոլորտների զարգացման համար: Վրացական կողմը 2022 թվականից սկսած ռուս ուկրայինական պատերազմից հետո չմիացավ նաև ՌԴ-ի դեմ պատժամիջոցներին և շարունակում է պահպանել երկխոսությունը ՌԴ-ի հետ:

Չնայած Վրաստան-ՌԴ տնտեսական հարաբերությունների զարգացմանը՝ քաղաքական առումով և հատկապես հակամարտության կարգավորման ուղղությամբ կողմերի միջև հակասությունները շարունակվում են: Վրացական կողմը շարունակում է մեղադրել ՌԴ-ին իր տարածքի 20 տոկոսի օկուպացիայի մեջ և պահանջում է միջազգայնորեն ճանաչված սահմանների վերականգնման ուղղությամբ աջակցություն միջազգային կառույցներից:

Վրաստանը շարունակում է որպես արտաքին քաղաքականության առաջնահերթություն պահել Արևմտյան կառույցներին ինտեգրացիան և անդամակցությունը, սակայն վերջին շրջանում լարվածության աճ է նկատվում Վրաստան-ԵՄ հարաբերություններում, որը կապված է «Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի ընդունման հետ, ինչին ի պատասխան Վրաստանում ԵՄ դեսպանը հայտարարեց, որ կասեցված է Վրաստանի անդամակցության գործընթացը, չնայած նրան, որ Վրաստանը 2023թ. նոյեմբերին ստացել էր անդամ դառնալու թեկնածուի կարգավիճակ: Վրաստանը կարևորում է նաև Արևմտյան կառույցների հետ ՀՀ համագործակցությունը, որը նշված է հայեցակարգում, սակայն վերջին շրջանում բավականին մեծ ակտիվություն կա ՌԴ-Վրաստան հարաբերությունրում և ՀՀ-Արևմուտք հարաբերություններում և դժվար է պատկերացնել, թե որ երկիրը, որ կառույցի կամ դերակատարի հետ հարաբերություններում ինչպիսի մակարդակի հարաբերություններ կձևավորի: Աշխարհաքաղաքական գործընթացներից հետո տպավարություն է, որ տարբեր փաստաթղթեր կորցնում են իրենց արդիականությունը: Վրաստանի կառավարության կողմից ընդունված փաստաթղթերում ամբողջովին չի արտացոլվում այն հանգամանքները, որոնք առկա են իրականության մեջ: Մասնավորապես, չի խոսվում 2008 թվականից սկսած ԵՄ և ՆԱՏՕ անդամ չդառնալու պատճառների, խոչընդոտների, մարտահրավերերի և դրանց հաղթահարման ուղիների մասին: Չի խոսվում Ռուսաստանի հետ ունեցած հետզհետե խորացող հարաբերությունների մասին: Չնայած փաստաթղթերի մեջ Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները նշվում են որպես ռազմավարական և բարձր մակարդակի, սակայն կողմերի միջև առկա են նաև հակասություններ: Նույնը կարող ենք ասել Վրաստան-ԵՄ, Վրաստան-ԱՄՆ և Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունների մասին, այսինքն փաստաթղթերը ամբողջական չեն արտացոլում այն իրականությունը, որը առկա է արտաքին քաղաքականության մեջ: Վրացական կառավարության դեմ վերջին ցույցերը նույնպես խոսում են արտաքին քաղաքական խնդիրների մասին, որոնց լուծումների հետ կապված փաստաթղթերում անդրադարձ չկար: Ընդհանուր առմամբ կարելի է նաև նշել, որ նոր իրողությունները, որոնք ի հայտ են եկել Վրասատան-ՌԴ հարաբերությունների

զարգացման, Վրաստան-Արևմուտք հարաբերությունների լարվածության ՀՀ-Արևմուտք հարաբերությունների զարգացման ֆոնին, դուրս են թողնում փաստաթղթի մի շարք ձևակերպումներ: Վրաստանն արտաքին քաղաքականության մեջ բալանսավորման հարցերում շարունակում է չեզոքություն պահպանել, որը երբեմն հարուցում է իր գործընկերների և հասարակության դժգոհությունը, հետևաբար այստեղ նույնպես ամեն ինչ չէ, որ հստակ է:

Փաստաթղթերում կարևոր նշանակություն ունի, թե որ երկիրն է նշվում առաջինը երկկողմ հարաբերությունների բաժնում, որն էլ իր հերթին ընգծում է տվյալ երկրի կարևորության աստիճանը և հարաբերությունների մակարդակը: Այսինքն, կարելի էր եզրակացնել, որ Թուրքիայի դերը Վրաստանի կյանքում և հատկապես արտաքին քաղաքականության մեջ տարածաշրջանում ամենակարևորն է: Ու այս ամենևին էլ պատահական չէ, որ սկսած 2000-ականներից Թուրքիան սկսեց մեծ ազդեցություն ունենալ Վրաստանի կյանքում, ինչը կրկնապատկվեց հատկապես 2008 թվականի «Հնգօրյա պատերազմից» հետո և Թուրքիան միանգամից լցրեց ռուսական ազդեցության նվազեցումից առաջացած վակումը, որն առավել քան նկատելի է հատկապես Աջարիայում: Չնայած, որ վրացական կողմը հաճախ է պնդում, որ Թուրքիան Վրաստանի համար կարևոր է նաև որպես ՆԱՏՕ անդամ և թուրքական ազդեցության մեծացումը համարում է ՆԱՏՕ-ի ազդեցության մեծացում: Որպես եզրակացություն կարելի է նշել նաև, որ Վրաստանը շարունակում է իր քաղաքական արտաքին առաջնահերթությունները կապել տարածաշրջանի երկրների և տարածաշրջանում դերակատար համարվող ուժային կենտրոնների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Caucasus Watch. (2019). Georgian Government adopts foreign policy strategy for 2019-2022. *Caucasus Watch*. https://caucasuswatch.de/en/news/georgian-government-adopts-foreign-policy-strategy-for-2019-2022.html

Kakachia, K., & Metreveli, M. (2013). *Foreign policy: The quest for sustainable security*. Konrad-Adenauer-Stiftung. https://www.kas.de/c/document_library/get_file?uuid=ab4f5ccc-a514-bce0-655b-75096aa181a7&groupId=252038

Mikeladze, L. (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches*. Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf

Ministry of Foreign Affairs of Georgia (MFA Georgia). (2006). *Foreign policy strategy 2006-2009*. https://gfsis.org.ge/media/download/GSAC/resources/115_1973_997704_Strategy_MFA2006-2009En.pdf

Ministry of Foreign Affairs of Georgia (MFA Georgia). (2021). *Georgian Foreign Ministry unveils 10-year action plan* (10 August 2021). Civil.ge. https://civil.ge/archives/436078

Sportel, E., & Tchkoidze, V. (2011). *Strengthening oversight of the security sector in Georgia: An agenda 2011*. Centre for European Security Studies. https://cess.org/wp-content/uploads/2019/12/Georgia-GP-27.pdf

Tskitishvili, D. (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches* (August 2022). Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf

REFERENCE LIST

Caucasus Watch. (2019). Georgian Government adopts foreign policy strategy for 2019-2022. *Caucasus Watch*. https://caucasuswatch.de/en/news/georgian-government-adopts-foreign-policy-strategy-for-2019-2022.html

Kakachia, K., & Metreveli, M. (2013). *Foreign policy: The quest for sustainable security*. Konrad-Adenauer-Stiftung. https://www.kas.de/c/document_library/get_file?uuid=ab4f5ccc-a514-bce0-655b-75096aa181a7&groupId=252038

Mikeladze, L. (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches*. Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf

Ministry of Foreign Affairs of Georgia (MFA Georgia). (2006). *Foreign policy strategy 2006-2009*. https://gfsis.org.ge/media/download/GSAC/resources/115_1973_997704_Strategy_MFA2006-2009En.pdf

Ministry of Foreign Affairs of Georgia (MFA Georgia). (2021). *Georgian Foreign Ministry unveils 10-year action plan* (10 August 2021). Civil.ge. https://civil.ge/archives/436078

Sportel, E., & Tchkoidze, V. (2011). *Strengthening oversight of the security sector in Georgia: An agenda 2011*. Centre for European Security Studies. https://cess.org/wp-content/uploads/2019/12/Georgia-GP-27.pdf

Tskitishvili, D. (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches* (August 2022). Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf

АНАЛИЗ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ГРУЗИИ И ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ ДОКУМЕНТОВ ПРАВИТЕЛЬСТВА

КАРЕН КАЗАРЯН

Принятые правительством внешнеполитические концепции и документы важны для понимания внешней политики Грузии и особенно региональной политики. Грузия и ее внешняя политика входят в число приоритетов изучения внешней политики РА, учитывая высокий уровень армяно-грузинских отношений, транзитное значение Грузии, существование большой армянской общины, проживающей в Грузии, а также взаимную интересы и интересы в двусторонних отношениях. В статье мы анализируем концепции внешней политики Грузии и документы, принятые правительством, их приоритеты и изменения, произошедшие после геополитических событий. При написании научной работы мы использовали системные методы историко-сравнительного, событийного и контент-анализа. В ходе нашей научной работы мы поставили перед собой следующие цели:

Изучить концепции внешней политики Грузии и документы, принятые правительством, концептуальные изменения, произошедшие после геополитических событий, а также актуальность концепций и некоторых внешнеполитических документов,

Достижения:

Концепции внешней политики Грузии претерпели множество изменений после геополитических событий, и не полностью отражают реальность, существующую во внешней политике Грузии.

Ключевые слова. Грузия, Россия, Запад, внешняя политика, концепция, Южный Кавказ, двусторонние отношения, многосторонняя дипломатия.

ANALYSIS OF GEORGIAN FOREIGN POLICY AND FOREIGN POLICY DOCUMENTS ADOPTED BY THE GOVERNMENT

KAREN GHAZARYAN

The foreign policy concepts and documents adopted by the government are important for understanding the foreign policy of Georgia and especially the regional policy. Georgia and its foreign policy are among the priorities of the study of RA foreign policy, taking into account the high-level Armenian-Georgian relations, the transit importance of Georgia, the existence of a large Armenian community living in Georgia, as well as mutual interests in bilateral relations. In the article, we analyze the concepts of Georgia's foreign policy and the documents adopted by the government, their priorities and the changes that took place after geopolitical developments. While writing the scientific work, we

used the systematic methods of historical-comparative, event and content analysis. In the course of our scientific work, we have set ourselves the following goals:

Study the concepts of Georgia's foreign policy, the documents adopted by the government, conceptual changes that took place after geopolitical developments, and also the relevance of concepts some foreign policy documents.

Achievements:

Georgia's foreign policy concepts have undergone many changes after geopolitical developments, and do not fully express the reality that exists in the foreign policy adopted by Georgia.

Key words. Georgia, Russia, West, foreign policy, concept, South Caucasus, bilateral relations, multilateral diplomacy.

Հոդվածը ստացվել է՝ 20.09. 2024

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 22.09. 2024

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 30.10.2024